



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### **Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ, ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՕՍԿՕ ԵՒ ԵՐԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՄՈԼԸ 75,000 ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ ԵՒ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական ժողովն ու Ազգ. Վարչութիւնը սրտի անհուն գոհունակութեամբ կը յայտնեն մեր ազնիւ ժողովուրդին, թէ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հովուապետական շնորհաբեր այցելութեան առիթով (6էն 23 Հոկտեմբերին), Տեր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան բարերար ամուլը 75,000 տոլարի սրտաբուխ նուիրատուութիւն մը կը կատարէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Արեւմտեան Թեմի Ազգ. Առաջնորդարանին: Այս նուիրատուութիւնը հաւասարապէս պիտի տրամադրուի Կաթողիկոսարանին, Ազգ. Առաջնորդարանիս եւ Ազգային Վարժարաններուն:

Բարերար ամուլը այս նուիրատուութեան ճամբով, յանձն կ'առնեն հիւրընկալութիւնը Վեհափառ Հայրապետին ի պատիւ Շաբաթ, 15 Հոկտեմբերին կազմակերպուած այն ճաշկերոյթին, որ ձօնուած է Ազգային Վարժարաններուն, իսկ Կաթողիկոսութեան նուիրաբերուած բաժինը պիտի յատկացուի Դպրեվանքին:

Կիրակոսեան ընտանիքին այս բարերարութիւնը նորագոյն նուիրաբերումն է եւ պերճախօս արտայայտութիւն՝ Կաթողիկոսութեան ու Արեւմտեան մեր Թեմի առաքելութեան նկատմամբ վստահութեան ու քաջալերանքին: Բարերար ամուլը անցեալին եւս պատկառելի նուիրատուութիւններ կատարած է Առաջնորդարանիս ու Ս. Նահատակաց եկեղեցւոյ:

Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութիւնը այսու շնորհակալութիւն կը յայտնեն բարերար ընտանիքին, այս ազնիւ նուիրատուութեան առիթով:

**OSKO AND YERAN KARAGHOSSIAN DONATE \$75,000 IN HONOR  
OF THE PONTIFICAL VISIT OF  
HIS HOLINESS CATHOLICOS ARAM I**

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Religious and Executive Councils, joyfully announce that on the occasion of the Pontifical Visit of His Holiness Catholicos Aram I, benefactors Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian have donated \$75,000 to be allocated to the Catholicosate of the Great House of Cilicia, the Western Prelacy, and Prelacy schools.

Through this donation, the Karaghossian family will host the Banquet in honor of His Holiness organized by the Board of Regents of Prelacy Schools which will be held on October 15, and the remaining half will be allocated to the Catholicosate Seminary.

The Karaghossian family are long-time Prelacy benefactors, and this latest generous donation is yet another demonstration of their staunch support and encouragement towards the mission of the Catholicosate and our Prelacy.

The Prelate and Councils express their heartfelt thanks to the Karaghossian family for their continued generosity.